Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ՝ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ (ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ) ԴԱՍԸՆԹԱՑԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԴԱՍԸՆԹԱՑ) 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Դասընթացին մասնակցելու համար կարող են դիմել մինչև 35 տարեկան Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք տիրապետում են հայերենին, և երկու օտար լեզուների՝ ներառյալ դիվանագիտական դպրոցում դասավանդման լեզուն (լեզուները), ունեն բարձրագույն կրթություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N1191-Ն որոշմամբ հաստատված բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկին համապատասխան:

2. Դիվանագիտական դպրոցի դասընթացներին չեն կարող մասնակցել այն անձինք, ովքեր՝

1) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ են ճանաչվել.

2) դատական կարգով զրկվել են որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) տառապում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ N 98-Ն որոշմամբ հաստատված հիվանդություններով.

4) դատապարտվել են հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով չի հանվել կամ չի մարվել:

3. Դասընթացին մասնակցելու համար դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում (կից ձևով՝ առցանց և տպագիր տարբերակը՝ անձամբ).

2) ինքնակենսագրություն՝ շարադրված ազատ ձևով (մեկ տպագիր էջի սահմաններում, 200-250 բառի սահմաններում, տողերի 1.15 չափ հեռավորությամբ, 11 տառաչափով, GHEA Grapalat տառատեսակով),

3) դասընթացին մասնակցելու նպատակի համառոտ նկարագիր (մեկ տպագիր էջի սահմաններում, 200-250 բառի սահմաններում, տողերի 1.15 չափ հեռավորությամբ, 11 տառաչափով, GHEA Grapalat տառատեսակով),

4) վերջին մեկ տարվա ընթացքում արված, անձնագրի ձևաչափի երկու լուսանկար՝ 3,5X4,5սմ չափի

5) անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

6) բարձրագույն ուսումնական հաստատության դիպլոմի պատճենը.

7) արական սեռի դիմորդների դեպքում՝ զինվորական գրքույկի կամ զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը,

8) սույն կետի 1-ին ենթակետում նշված դիմումում ներկայացված տեղեկությունները հաստատող այլ փաստաթղթեր:

4. Դիմորդի կողմից նշված երկրորդ օտար լեզվի իմացության ստուգման անհնարինության դեպքում, դիմորդին առաջարկվում է սույն կարգով նշված առաջադրանքները կատարել որևէ այլ երկրորդ օտար լեզվով: Դիմորդի հրաժարման դեպքում վերջինս հնարավորություն չի ունենում մասնակցելու ընդունելության մրցույթին:

5. Սույն կարգի 2-րդ կետում նշված սահմանափակումների վերաբերյալ սխալ կամ կեղծ տեղեկություններ ներկայացնելը հիմք է հանդիսանում դիմորդի ընդունելությունը մերժելու կամ ունկնդրին Դիվանագիտական դպրոցի դասընթացներից հեռացնելու համար:

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

6. Դիվանագիտական դպրոցի՝ «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» ծրագրին մասնակցելու համար դիմորդների ընտրությունը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով)՝ ԱԳՆ գլխավոր քարտուղարի կողմից հաստատված հանձնաժողովի անդամության թեկնածուների ցանկից: Հանձնաժողովում ընդգրկվում են առնվազն 20 տարվա դիվանագիտական ծառայության ստաժ և մանկավարժական, կրթական և գիտահետազոտական գործունեության ոլորտում գիտելիքներ և փորձառություն ունեցող, դիմորդների մասնագիտական գիտելիքների և հմտությունների տիրապետման մակարդակը ստուգելու կարողություններ ունեցող անձինք: Հանձնաժողովում համաձայնությամբ կարող են ընդգրկվել ներկայացուցիչներ գիտական և ակադեմիական շրջանակներից: Հանձնաժողովը կազմված է առնվազն յոթ անդամից, ընդ որում ցանկացած դեպքում հանձնաժողովի անդամների թիվը կենտ է: Հանձնաժողովի կազմում, ի պաշտոնե, ընդգրկվում են Դիվանագիտական դպրոցի տնօրենը և նախարարության անձնակազմի կառավարման վարչության պետը: Ըստ անհրաժեշտության, ԱԳՆ գլխավոր քարտուղարի կողմից ձևավորվում է օտար լեզուներով կատարված գրավոր աշխատանքները և թարգմանությունները ստուգող ենթահանձնաժողով, որի կազմում կարող են ընդգրկվել բարձրագույն կրթական հաստատություններից դիվանագիտական դպրոցի կողմից հրավիրված համապատասխան մասնագետներ:

7. Սույն կարգի 3-րդ կետում նշված փաստաթղթերը առցանց և անձամբ ներկայացրած դիմորդները կարող են մասնակցել դասընթացի ընդունելության քննություններին:

8. Ընդունելության քննությունները բաղկացած են գրավոր և բանավոր քննություններից, ընդ որում՝ գրավոր քննությունը բաղկացած է երկու փուլերից:

9. Գրավոր քննության առաջին փուլում դիմորդները հանձնում են առաջարկված բազմակի պատասխաններից ընտրությամբ թեստ, որի հարցերը վերաբերում են ՀՀ սահմանադրությանը և պետական կառավարման ձևին, Հայաստանի պատմության և պետականության հիմնական դրվագներին, ինչպես նաև ստուգում են ընդհանուր գրագիտության, տրամաբանության և զարգացվածության մակարդակը:

10. Գրավոր քննության առաջին փուլը ներառում է նաև մասնագիտական տեքստերի թարգմանություն հայերենից դիվանագիտական դպրոցում դասավանդման մյուս լեզու(ներ) և դիմորդի տիրապետած երկրորդ օտար լեզու և հակառակը:

11. Գրավոր քննության առաջին փուլը համարվում է հաղթահարված սահմանված ժամանակահատվածում բոլոր առաջադրանքների միջին գնահատականի առնվազն 50 տոկոս

ստանալու դեպքում, ընդ որում որևէ առանձին առաջադրանքի՝ թեստի և յուրաքանչյուր թարգմանության միավորը չի կարող ցածր լինել 30-ից:

12. Գրավոր քննության առաջին փուլը հաջողությամբ հաղթահարած դիմորդները հրավիրվում են երկրորդ փուլ՝ գրելու միջազգային հարաբերությունների և արտաքին քաղաքականության թեմաներով հայոց լեզվով շարադրություն:

13. Դիմորդը շարադրությունն ամփոփում է դիվանագիտական դպրոցում դասավանդման մյուս լեզվով և դիմորդի տիրապետած երկրորդ օտար լեզվով: Այս փուլի յուրաքանչյուր առաջադրանքը գնահատվում է 20 բալային համակարգով:

14. Գրավոր քննության երկրորդ փուլի գնահատականը ձևավորվում է տվյալ գրավոր աշխատանքը ստուգող հանձնաժողովի անդամների կողմից տված գնահատականների հանրագումարի միջինի հիման վրա: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է կրկնակի՝ հանձնաժողովի երկու անդամի կողմից: Աշխատանքներն անանուն են: Գնահատման չափանիշներն են գրավոր խոսքի կուռ և տրամաբանական կառուցվածքը, շարադրանքի ամբողջականությունը, շարադրության թեմային առնչվող երևույթների, գործընթացների, իրադարձությունների գնահատման խորությունն ու բազմակողմանիությունը, փաստերի ճշգրտությունը, ընդհանուր գրագիտությունը, շարադրանքն օտար լեզվով ամփոփելու կարողությունը, օտար լեզվով մասնագիտական բառապաշարի իմացությունը և շարադրանքի՝ սահմանված ծավալներին համապատասխանությունը:

15. Ընդունելության բանավոր քննության են հրավիրվում այն դիմորդները, որոնց գրավոր աշխատանքի բոլոր բաղադրիչների հանրագումարը հավասար կամ բարձր է հնարավոր առավելագույն միավորի 60 տոկոսին, ընդ որում որևէ կոնկրետ առաջադրանքի միավորը չի կարող ցածր լինել այդ առաջադրանքի հնարավոր առավելագույն 20 միավորի 50 տոկոսից՝ 10 միավորից:

16. Բանավոր քննության ընթացքում՝ հանձնաժողովի որոշմամբ, դիմորդին կարող է առաջարկվել խոսել գրավոր հարցատոմսով առաջարկվող թեմայի (միջազգային հարաբերությունների, Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության, դիվանագիտության որևէ տեսական հնարավոր իրավիճակի մասին) շուրջ և/կամ հանձնաժողովի անդամների կողմից կարող են տրվել բանավոր հարցեր թեկնածուի ընդհանուր գիտելիքները և միջազգային հարաբերությունների իմացությունը ստուգելու, ինչպես նաև դիմորդի հաղորդակցական հմտությունները և դիվանագետին հարիր պահվածքի անհրաժեշտ բաղադրիչները գնահատելու նպատակով: Բանավոր հարցրերը տրվում են ինչպես հայերեն, այնպես էլ դիվանագիտական դպրոցում ուսուցման մյուս լեզուներով: Եթե դիմորդը դիմումում նշել է այլ լեզուների իմացության մասին, նրան կարող են վերոնշյալ թեմաների շուրջ հարցեր տրվել նաև նրա նշած լեզվով: Բանավոր քննությունը գնահատվում է 20 բալային համակարգով: Բանավոր քննությունը հաջողությամբ հաղթահարած են համարվում հարցազրույցի արդյունքում առնվազն 12 միավոր ստացած թեկնածուները: Գնահատականը ձևավորվում է հանձնաժողովի անդամների կողմից տրված գնահատականների հանրագումարի միջինի հիման վրա: Բանավոր քննության գնահատման չափանիշներն են բանավոր խոսքի վարժ և համոզիչ լինելը, բառապաշարի հարստությունը, բանավոր շարադրանքի տրամաբանական կառուցվածքը, փաստերի ճշգրտությունը, հաղորդակցման հմտությունը և նյութը պատշաճ կերպով ներկայացնելու ունակությունը:

17. Դիվանագիտական դպրոց ընդունվում են բանավոր փուլը հաղթահարած, առավել բարձր միավորներ ստացած դիմորդները՝ ըստ հայտարարված ընդունելության տեղերի քանակի: Հավասար անցողիկ միավորներ ունեցող դիմորդների և ընդունելության տեղերի քանակների

անհամապատասխանության դեպքում, առկա տեղերը առավել բարձր միավորներ ստացած դիմորդներին հատկացնելուց հետո, հանձնաժողովը մնացած թափուր տեղերը հավասար միավորներ հավաքած դիմորդների միջև բաշխում է քվեարկությամբ՝ հաշվի առնելով դիմորդի գրավոր և բանավոր քննությունների բաղադրիչների գնահատականները, միջազգային հարաբերությունների, դիվանագիտության և առնչվող ոլորտներում պատշաճ փաստաթղթավորված լրացուցիչ կրթությունն ու փորձառությունը, այլ օտար լեզուների՝ սկսնակից բարձր մակարդակով հավաստված իմացությունը:

18. Դիմորդները կարող են բողոքարկել քննության արդյունքները՝ քննության յուրաքանչյուր փուլի արդյունքները հրապարակելուց հետո երկօրյա ժամկետում: Բողոքարկումը կատարվում է բողոքարկման հանձնաժողովին ուղղված գրավոր դիմումով՝ բողոքարկման դիմումն անձամբ հանձնելով Դիվանագիտական դպրոց:

19. Բողոքարկման հանձնաժողովը ձևավորվում է արտաքին գործերի նախարարի հրամանով՝ գլխավոր քարտուղարի կողմից հաստատված հանձնաժողովի անդամության թեկնածուների ցանկից, քննական հանձնաժողովի անդամ չհանդիսացող անձանց թվից: Բողոքարկման հանձնաժողովը կազմված է առնվազն երեք անդամից:

20. Բողոքարկման հանձնաժողովը դիմումը քննարկում է ստացվելու հաջորդ օրը: Բողոքարկման արդյունքում դիմորդի գնահատականը կարող է բարձրացվել, թողնվել անփոփոխ կամ նվազեցվել, որի մասին դիմողին տեղեկացվում է դիմումի քննարկման օրը:

21. Քննության արդյունքները կարող են բողոքարկվել նաև դատական կարգով:

22. Ընդունված դիմորդներին Դիվանագիտական դպրոցը ծանուցում է էլեկտրոնային փոստով և հեռախոսազանգով: Մրցույթը չհաղթահարած դիմորդների ծանուցումը կատարվում է էլեկտրոնային փոստով: